


2385



9147  
9-68.

1926



№ 14 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 14

ՀԱՍՏԱԿԱԳԻՑԱԿԱՆ ՄԵՐԻԱ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸՆՐԺՈՒՄՆԵՐԸ  
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԿՐԱՏՈՒՄՆԵՐՈՎ ՓՈԽ. Ա. ԱՏԱՄԲՈԼՅՅԱՆ

.....)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱ. ԽՈՏՈ. ԽՈՎԱՅՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ - 1926

9(47)  
9-68

20.03.2013

30 MAY 2011 \* JAN 2006

№ 14 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 14

9(47)

գ-68

ԱԿ

ՀԱՅՈՐԴԻԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՐԻԱ

# ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՃԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՎԱՆՈՒՄ

Հ/Հ/Հ  
Հ/Հ/Հ  
Հ/Հ/Հ

Կրթառումներվագիլ. Ա. ԱՍԱՄՅՈՒ. ՅՅ. Ն.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ - ԵՐԵՎԱՆ - 1926

## ՍՏԵՆԿԱ ՌԱԶԻՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Դոնի բնակիչ-

Հոռոց կենտրոնական Մոսկովիայից շահերը տեղն անցնում ելին Դոն և այնտեղ բնակություն հաստատում: Այդպիսիներից ելին նաև կազակները, վորոնք հետզհետե նստեցին իրենց գրաված հողերում, սեփական անտեսություն հիմնեցին, հասկացան հողային սեփականության արժեքը: Այդ կազակներն ունելին ուրույն ազատ կարգեր, կառավարվում ելին իրենց զորապետներով, ատամաններով և կենտրոնական մոսկովյան կառավարության յենթարկվում ելին այն գեպքում, յերբ իրենց ձգտումներին ու շահերին համապատասխան եր: Յերբ ճորտատիրական կարգերը հաստատվեցին Ռուսաստանում, խաղաղ Դոնը դարձավ ապաստան բազմաթիվ լեկվորների, վորոնք վախչում ելին կալվածատերերի և իշխանների բանություններից: Հին կազակները հաշտ աչքով չելին նայում այս նորեկներին, վորոնք խանգարեցին նրանց խաղաղ կյանքը: Խնդիրն այն է, վոր հին կազակության և Մոսկովի կառավարության միջև, յերկար կոիվներից հետո, հաստատվել ելին արդեն խաղաղ վասսալական հարաբերություններ: Մտանալով Մոսկովի կառավարությունից գրամական և զինամթերքի (արձճի, վառողի) աջակցություն՝ հին կազակությունը դարձել եր նրանց ազդեցության նեցուկը Դոնի շրջանում: Այժմ վախսատականների ներկայությունն սպառնում եր խախտել ալդ հարաբերությունները: Մոսկովի կառավարությունը պահանջեց վերադարձել վախսատականներին, բայց կազակությունը մերժեց, վորովհետեւ նրանց սովորության մեջ չկար վախսատականներին հանձնել: Չսայած ալս հանգամանքին, հին

կազակները դժգոհությամբ ու կասկածանքով ելին վերաբերա-  
վում նորեկներին:

Հին, տնափորփած հարուստ կազակության և նորեկների  
շահերը հակառակ ելին իրար: Նորեկները հող չունեյին, թա-  
փառական կյանք ելին վարում կամ վորպես բատրակ աշխա-  
տում ելին կազակության մոտ: Այս նորեկները, ընչազուրկնե-  
րը, բնականաբար, դժգոհ ելին իրենց դրությունից, թշնամա-  
բար ելին վերաբերփում հարուստ կազակությանը, չեյին յեն-  
թարկփում նրանց սովորություններին, կարգերին, ուղում ելին-  
իրենց ուրույն կիանքն ունենալ: Հին կազակությունն ել դժգոհ  
եր նրանցից և ամեն կերպ հակառակփում եր նրանց ձգտում-  
ներին, նրանց փոխարաբերությունները լարվեցին: Փախստա-  
կան ընչազուրկների գալը, հաճախ ընտանիքներով, յերեխանե-  
րով՝ ծանր դրություն ստեղծեց Դոնում: Մոսկվայի կառավա-  
րությունն սկսեց կասկածանքով վերաբերփել և այլիս ցորեն  
չտվեց, վոր ամեն տարի իրեն շնորհ ուղարկում եր թագա-  
վորը կենտրոնական շրջաններից: Իսկ տեղական հացը չեր-  
բավականացնում, վորովինետև նախ՝ նորեկների գալով բնակչու-  
թյան թիվը եր ավելացել, և յերկրորդ՝ արտադրության միջոց-  
ներն ու տնտեսության ձեզ լինելով չափազանց պարզ ու հա-  
սարակ, յեղած հողամասերից ավելի արդյունք չեյին կարող  
ստանալ: Ու սկսվեց Դոնում 1667 թվին համատարած սովը:

Ընչազուրկների Ստեղծվում ե ծանր, հուսահատական վի-  
գրությունը. ծակ ընչազուրկների համար: Կազակությունը  
նույնպես ծանր որեր ե ապրում ե յելք ե փնտում ստեղծված  
դրությունից, պարենային ճգնաժամից զուրս գալու համար:  
Յելքը, սակայն, գտնում են իրենք ընչազուրկները, թողնում են  
Դոնը և առանց կազակության զինվորական ատամանի գիտու-  
թյան անցնում են Վոլգա: Այստեղ առաջ ել գործում ելին  
ափազային խմբեր, վորոնք սարսափ ելին տարածել նստա-  
կաց բնակիչների վրա: Ահա Դոնի ընչազուրկներն անցնում են  
սրանց մոտ «վորսի» Ստենկա Ռազինի զլիավորությամբ: «Հին  
բուն կազակները» բացասաբար ելին վերաբերփում Ստենկա  
Ռազինի ձեռնարկությանը: Յեվ այլ կերպ չեր ել կարող լիւ-

Նել: Ի՞նչպես կարող ե տունուտեղ դարձած, ունկոր կազակու-  
թյունը համակրել ընչազուրկների ծրագրին, նրանց ձգտումնե-  
րին, այն ընչազուրկների, վորոնք տնտեսավես նրանցից կախված  
ելին և քաշ ելին տալիս մի կիսաքաղց, հուսահատ գոյություն:  
Ռազինի ազգեցությունը ժողովրդի վրա  
գուրկեն եր ա- շատ մեծ եր: Յեվ սա շատ հասկանալի յէ.  
ուաշնորդ.

Նրա գործունելությունը միանգամայն համա-  
պատասխանում եր հուզված ժողովրդի ձգտումներին, ակնկա-  
լություններին, վորոնք նրա անվան հետ ելին կապում իրենց  
սոցիալական ազստագրումը: Ռազինը ընչազուրկների առաջ-  
նորդն եր. առաջնորդը այն մարդկանց, վորոնք չկարողացան  
տունուտեղ լինել Դոնում ու հարմարվել բնիկներին: Ստեն-  
կա Ռազինի հեռանալը փոխեց իրերի դրությունը Դոնում. Նախ  
լուծվեց վեճը ընչազուրկների և կուլակության միջն և յերկրորդ՝  
հարաբերությունը Մոսկվի կառավարության հետ, վոր մինչեւ  
այդ փոխադարձ անվատահերի յեր, փոխվեց: Բայց Վոլգայի և  
Յափէրի հարուստ կազակությունը չարաչար տուժեց. Ստենկա  
Ռազինն ավերի ու թալանի յենթարկեց նրան:

Ռազինը Վոլգայում պարապում եր «ավագակությամբ»:  
Նա հարձակվեց Վոլգայով իջնող հացի հարուստ կարավանի վրա  
և թալանեց: Հասնելով մինչև Յարիցին, Ռազինն անցավ Սև  
Յարը և հասավ Յափէրի ակունքներին. այստեղ ընչազուրկների  
առաջնորդը միառժամանակ կանգ առավ: Այստեղից նա սկսեց  
իր արշավանքները հարևանների վրա: Հագաքելով իր շուրջը  
ընչազուրկների մի ստվար բանակ, Ռազինը արշավանք կազ-  
մակերպեց գեպի Պարսկաստան, վոր ընդհանրապես հաջող յելք  
ունեցավ: Պարսից զորքերը ջարդվեցին, բայց Ռազինը յերկար  
շմաց այստեղ. թշնամի և դեպի իրենց տաելությամբ լցված  
բնակչության մեջ անհնարին եր մնալը: Ռազինը վորոշեց վե-  
րադառնալ տուն, անցնել Դոն: Նրա վերադարձի լուրն արդեն  
հասել եր Աստրախան, և զորավար Պրովորովսկին վորոշել եր  
զինված զիմագրություն ցույց տալ նրան: Սակայն ընդհարում  
տեղի չունեցավ: Յերկու կողմերն ել բանակցություն սկսեցին  
և 1663 թվի ոգոստոսի 25-ին խաղաղ դաշն կնքեցին: Ռազինն  
իրավունք ստացավ աղատ Դոն վերագառնալու՝ զենքերը, ուզ-

մամթերքը վերադարձնելու պայմանով։ Բայց Ռազինը խախտեց պայմանագիրը, խոստացածից վոչինչ չտվեց և փախավ Դան։ Ռազինի գալով իրերի զրությունը Դոնում գիշատուր։

Միանգամայն փոխվեց։ Ընչաղուրկները զլու իւ բարձրացրին։ Ստենկա Ռազինը դարձավ Դոնի փաստական դիկտատորը։ Նրա զրքը մեծացավ։ Ակրում իրեն խաղաղ եր պահում, զրգոիչ գրծողություններ չեր սկսում ունեոր կազակության դեմ։ Ռազինը հիմնեց կագալիկ քաղաքը և այնտեղից կառավարում եր ամբողջ Դոնը։ Նրա իշխանությանը դիմադրող չկար. ունեոր կազակությունը, ընչաղուրկների վախի ու սպառնալիքի ազգեցության տակ, լուռ եր. Ուշաղրության արժանի յէ Ռազինի գործունեյությունը Դոնում. այնտեղ նկատելի յե ինչ վոր ծըազիր, վորոշ գաղափար։ Ռազինը պաշտապահում եր Դոնի ինքնուրույնությունը, նրա ազատ կարգերը և այդ հողի վրա ընդհարվում եր Մոսկվայի վարչության հետ։

Թշնամաբար վերաբերվելով Մոսկվայի կառավարությանը Ռազինը կատաղի և անհաշտ վերաբերմունք ուներ դեպի հոգեգորականությունը։ Սրանց համարում եր նա Մոսկվայի կառավարության գործակալներ և ամեն տեսակ խոչընդոտներ եր հարուցանում նրանց դեմ, թույլ չեր տալիս շինելու, նորոգելու տաճարները, ծաղրում եր յեկեղեցական ծեսերը, որինակ, պսակագրությունը. «Ինչի՞ յեն հարկավոր տերաբերները. — ասում եր Ռազինը. — պսակվել եք ուղում, զնացեք, կանգնեցեք զուլզ-զույզ մի ծառի առաջ, պար յեկեք նրա շուրջը, և ահա ձեզ պսակվել»։

Ռազինն իր բողոքը Մոսկվայի կառավարության դեմ ուղեց ավելի շոշափելի, ավելի ակտիվ դարձնել։ Ազատ Դոնի շրջանից հեռանալով, նա կոչ եր անում ամենքին, բոլոր ճշնշավներին, ազատասերներին, միանալ իրեն և կովել ամեն կարգի բռնակալների դեմ։ Իր գործունեյությունը տեղափոխելով Վոլգայի ըրջանը, Ստենկա Ռազինը լավ գիտեր, վոր այնտեղ պարարտ հող կա. բովական եմի կայձ, և հրդեհը կրոնկի, Ռազինի կոփոց Ռազինն իր կոփն սկսեց ըստ յերեսութիւնիսների նախ իշխանների դեմ. այն դափաճան իշխան նախանդես եր զալիս զորպես կողմանակից ու պաշտպան հա-

մաժողովրդական թագավորի գաղափարին։ Նա շարունակ ասում եր, թե ինքը կովում ե վոչ թե թագավորի, այլ դափս ճան իշխանների (բոյարների) դեմ։ Այդ քաղաքականությունը նրան ավելի բարձրացնում եր ժողովրդի աչքում։ Սակայն իրապես շարժման նպատակներն այլ եյին։ Ապստամբության առաջնորդները, մահապատժից առաջ, այսպես բացատրեցին իրենց նպատակները. «Մենք ուզում ենք զրավել Մոսկվան և ձեզ, բոլոր իշխաններիդ ու ազնվականներիդ կոտորել»։ Շարժումը սոցիալական հիմք ուներ. նրա նպատակն եր վոչնչացնել «ժողովրդի արյուն ծծողներին, իշխաններին ու զորագարներին, մի խոսքով՝ վերացնել ժողովրդի քաղաքական ու սոցիալական հարստահարիչներին»։

Սոցիալական հեղափոխության կրակի մեջ կխորտակվեր նաև թագավորական իշխանությունը, և նրա փլատակների վրա կսեղծվեյին նոր կարգեր, նոր հարաբերություններ։ Ռազինն ինքը կրօնաժողով չեր, բայց կովի բոլոր միջոցներն որինական համարելով և հաշվի առնելով ժողովրդի կրօնական զգացմունքները, տրամադրությունն ու հոգեբանությունը, հաշտ աչքով չեր նայում կրօնական նորամուծություններին։

Սակայն կրօնական մոտիվը խոշոր տեղ չեր կատարում ուղինեան ապստամբության մեջ, ինչպես կարծում են վումանք։ Ապստամբության սկզբին վոչ Վոլգայում, վոչ Դոնում այդ հողի վրա վորեե վեճ չեր ծագել։

Ապստամբության մեջ Ռազինի ապստամբությունն սկսվեց 1670 թան ընթացքը. թվին, Գրավեցին Յարիցին և Կամըշին քաղաքները։ Աստրախանից զրկած զորքն անցավ Ռազինի կողմը, և այնուհետև քաղաքը վերցնելը դժվար չեր, մանավանդ վոր ժողովրդի ստորին խավերը նրա կողմն եյին։

Ստենկա Ռազինի դատաստանը խիստ գաժան եր. Բոլոր զորագարներն ու թագավորական գործակալներն սպանվեցին։ Կոտորվեցին նաև շատերը ծառայող ազնվականներից. Վոչնչացրին բոլոր այն գործերը, վորոնք պահվում եյին Աստրախանի պետական պալատում, մեծ հրձանք պատճառելով հուզված ժողովրդին. Ժողովրդին ուրախ եր, վորովհետև այժմ նա տ-

ղատ եր ամեն տեսակ ձնշումից, տնտեսական կախումից։ Յեկեղեցական գույքերը գրավեցին։ Թալանեցին վաճառանցներն ու խանութները։ Քաղաքը գրավելով՝ Ռազինը նոր վարչություն եր հիմնում, լայն ինքնավարության և ընտրական սկզբանքներով։

Փողովուրդն ազատ շունչ քաշեց, վորովհետեւ ազատվում եր Մոսկայի վարչության կամայականություններից և կաշառակերությունից։

Ապստամբությունը Վոլգայի ուղղությամբ տարած լեց դեպի վեր և հասակ մինչև Սամարա, բայց Սիմբիրսկի տակ չարաշար պարտություն կրեց ցարական զորավար իշխան Բարյատինսկու ձեռքից։ Այնուհետև ապստամբությունն սկսեց թուլանալ և շուտով ձնշվեց։ Ստենկա Ռազինը և եր յեղբայրը գերի ընկան և կախվեցին 1671 թ. հուլիսի Մոսկայի Կարմիր հրապարակում (լօնու մեսու)։

Ապստամբությունը Ռազինի անվան հետ կապված շարժումը բանբերն ու գրավել եր անազին տարածություն։ Վոտօի յերանհաշողությունը հանել ժողովրդական ահազին զանգվածներ, հա-

նը. սարակական լայն խափեր։ Գլուխ բարձրացրին բոլոր դժգոհները, ձնշվածները, հալած վածները, շահագործ լողները։ Ապստամբեցին այլազգիները՝ մորդվաները, չուվաշները, չերեմիսները, կալմիկները, բաշկիրները։ Քաղաքի ստորին խավերը նույնպես համակրանքով ելին վերաբերքում և նպաստում, վորքաղաքներն անցնեն Ռազինի կող մը։ Գյուղացիությունը խանդավառությամբ լցնում եր ապստամբների շարքերը և նրա հետ միացած՝ թալանում, ավելում, սպանում, կանանց անարգում։

Շարժումը հասակ մինչև Նիժնի։ Ապստամբությանը միացան Արզամասը, Պենզան, Տամբովը, Հուղմունը ալիքները հասան մինչև իսկ Սոլովեցիկի մենաստամնը — ստարոոբլյադների (հին ծիսակորների) կենտրոնին։ Ապստամբության արձագանդները հասան նաև Սլաբոդսկայա, Ռեկրայնա, Բելգորոդ, Զուգուե։ Զւը չե, վոր այստեղ մշտական «հաջոցով» ելին հիշում թագավորի անունը, վորի համար և հաճախ տեղի յեն ունենում քաղաքական պրոցեսներ։

Ռազինի հաջողության պատճառը — նրա սոցիալ-տնտեսական ծրագրին եր հարուստների գույքը բաժանել աղքատներին, ստեղծել համայն սոցիալ-տնտեսական հավասարություն — ահա շարժման արագ գարգացման պատճառը։

Սակայն շարժումը չեր կարող հաջողությամբ պսակվել, վարովինետեւ նա կաղմակեր զված շարժում չեր։ Նրա մասնակիցները պատահականորեն հավաքված տարրեր եյին։ Նրանք կռվի մեջ կոփած դասակարգ չեյին կազմում, չկար զեկավար դասակարգ։ Գյուղացիությունը, միանալով Ռազինին, խեթաչը աչքով եր նայում այլազգիներին (սիօրուն), վերջիններն ել լցված ատելությամբ դեպի Մոսկովի պետությունը, ավերում ու թալանում ելին ոռուս նստակյաց բնակչությունը։ Այս հանգամանքը թուլացնում եր շարժումը։ Տիրող դասակարգերն սկզբում գլուխները կորցրել ու ձնշված ելին, բայց հետո գլուխ բարձրացրին, ոգտվեցին ապստամբության սխալանքներից, լավ կազմակերպվեցին և այնպիսի հարգած հասցրին, վոր ուղղելն այլիս անհսարին եր։ Դասակարգային կազմակերպության ուժը հաղթող հանդիսացագ։ Ազնվական-կալվածատիրական դասակարգը ձնշեց շարժումը ամենասոսկալի միջնուերով (մոտ 100,000 գյուղացիներ կոտորեցին) և «հապատակեցրեց» իրեն գյուղացիությունը։ Սակայն նրա մեջ ապստամբության գաղափարը, ազատվելու ձգումը չմեռավ իսպառ։ Հարկավոր եր առիթ նորից բռնկվելու, վորովինետեւ սոցիալ-տնտեսական պայմանները մնացին նույնը։

Ըստ գ. Թիգետի

### Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՞վ եր Ստենկա Ռազինը։
2. Վոր խափերի շահերի արտահայտիչն եր նա։
3. Կար վորով ծրագիր, զաղափար նրա գործունեյության մեջ։
4. Ի՞նչպես եր վերաբերվում հարուստ կաղակությունը նրա գործունեյությանը։
5. Ի՞նչպես եր վերաբերվում Ստ. Ռազինը հոգերականությանը։
6. Ի՞նչպես ելին վերաբերվում այլազգիները և քաղաքի ստորին խովերը ապստամբությանը։
7. Ի՞նչ ընթացք ու ընույթ ուներ ապստամբությունը։
8. Ի՞նչու սկարավեց Ստ. Ռազինը։

## ՊՈՒԳԱՉՈՎՅԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Դյուղացիական  
հուզմունքները  
XVIII դարում.

Ռազինի ապատամբությունը չարաչար ճնշվեց. բայց խնդիրը զբանով չլուծվեց: Գյուղական հուզմունքները չդադարեցին. այստեղու այնտեղ տեղի եյին ունենում հուզմունքներ ավել կամ պակաս ուժգնությամբ: Յարական-ազնվականական կառավարությունը զինվորական ուժով ճնշում եր բողոքի ամեն մի նշուլը պատժիչ զորախմբերը շրջում ելին գյուղերը և դաժան միջոցներով հարկադրում եյին գյուղացիությանը հպատակվել: Յերեմին ամբողջ գյուղը վոտքի յեր կանգնում և ըշում պատժիչ զորախմբին, բայց սա իրենց եժան չեր նստում: Այս փաստը բնորոշ ե այն տեսակետից, վոր ցույց ե տալիս, թե ինչ աստիճանի յե հասնում զյուղացիության ատելությունն ու կատաղությունը:

Հուզմունքներն ուժեղացան առանձնապես այն ժամանակ, յերբ սկսվեցին Յեկատերինա Բ. կայսրունու Որենսդրական Մասնաժողովի լուրություններն ու աշխատանքները: Գյուղացիության մեջ լուրեր տարածվեցին, թե որենսդրական ճանապարհով պետք ե բարփոքի իրենց զրությունը: Հուզմունքները դադարեցին: Գյուղացիությունն սպասում և ակնկալում եր: Բայց իզուր: Ճորտ գյուղացիության աղատության յերազանքն ու սպասելիքներն իդերե յելան: Համբերության բաժակը լցվեց: Ու բռնկվեց այն տարերային, վայրագ ու ահարկու շարժումը, վոր հայտնի յե պուգաչովյան ապատամբություն անունով:

Ս. պ. ս. ա. մ. բ. ու Ինչպես զյուղացիական հուզմունքների, բյան պատճառու այնպես և այս շարժման հիմնական պատճառը ները.

Ճորտատիրական հոռի, դաժան կարգերն ելին: Գյուղացիությունը տնքում եր նրա ծանր լծի. տակ: Դրան ավելացել եր նաև այն, վոր գործարանատերերին իրավունք եր տրված ճորտեր գնելու և աշխատեցնելու ամենադաժան պայմաններում: Կալվածատերի վայրագ-յեսասեր վերաբերմունքը հասել եր ծայր աստիճանի: Գյուղացիության մեջ կուտակվել եր ատելության, վրեմինդրության զգացում, ուժեղացել

ազատագրման տեսչը: Սակայն նա որորվում եր այն հուսով, թե իր ազատագրումը պետք ե կատարվի վերեից, թագավորի հրամանով: Նա դեռ չեր հասել այն զիտակցության, թե ազատագրման ուրիշ ճանապարհներ կան: Կառավարչական զանազան կարգադրություններ, 1767 թ. Որենսդրական Մասնաժողովի ընտրությունները նպաստում ելին այդ գաղափարին և հուսագրում նրան: Անհետ չկրապվ նուև պալատական հեղաշրջումը, յերբ Յեկատերինան գահընկեց արավ Պետրոս III-ին: Ժողովրդի մեջ տարածվեց, թե իր Պետրոս III-ը վորխում ե որենքները, այսինքն վերացնում ե ճորտատիրական իրավունքը, գրավում ե վանքական կալվածները, խլում ե գործարանատերերին տված իրավունքը և այն և այն:

Ու լարված տրամադրությամբ գյուղական զանգվածներն սպասում են թագավորական ազատարար հրամանին, բայց նա չկա ու չկա: Իսկ ճորտատիրական ծանր լրտելը շարունակում եր ել ավելի ճգմել: Վերջապես զյուղացիությունն ել չի համբերում և վոտքի յե կանգնում: Յերեսան ե գալիս մեկը՝ Պուղչուղովը, վոր զառնում և հալածված, անարգված ժողովրդի սպասելիքների ու տենչանքների հարազատ արտահայտիչը: Նա անցնում ե ազստամբության գլուխ, հոչակելով իրեն վորպես Պետրոս III կայսր: Այս հանգամանքը թե ու թիկունք ե տալիս ժողովրդական զանգվածներին, որինականացնում նրանց գործողությունները, թե օրիենց սպատագրումը արգում ե վերեից, տեր թագավորի հրամանով:

**Պ. գ. եր Պուղա-**

**Յեմելյան Պուղաչովը Դոնի վտարանդիչովը.** Կաղակներից եր: Ուր ասես, վոր նա չեր յեղել: Նա հասագ մինչև Յափիկ՝ պուղաչովյան շարժման կենտրոնը: Նրա զալն այստեղ սի նպատակ ուներ. ծանրթանալ հասարակական-քաղաքական հանգամանքների հետ: Այստեղ նա շփվեց կաղակների տալքեր խավերի հետ, ծանրթանալ արամադրություններին, ճատումներին: Հավաստիանալով, վոր Պետրոս III-ի կենդանության լուրը ձիշտ ե, սկսեց սկզբում զգուշորեն, ապա ավելի ու ավելի համարձակ իրեն ցուց տալ վորպես Պետրոս III-ը: Նրա համար ձակ շեշտը, զանազան խոս-

տումները մեծ տպավորություն եյին թողնում Յափկի կազակների վրա։ Նրա այս, անգամ զգուշ, ինքնակոչությունը քիչ մասց ցավալի վախճան ունենար Պուգաչովի համար։ Նրան բըռնեցին ու բանտարկեցին Կազանի բանտում։ Սակայն հանգամանքները նպաստեցին, և նա կարողացավ փախչել բանտից։ Յափկի կյանքը մեծ ազդեցություն ունեցավ Պուգաչովի վրա։ Շփելով ժողովրդի հետ՝ նա տոգորվեց նրա ազատության գաղափարով։ Զուր չե, վոր Պուգաչովի գործունեյության հիմնական գիծը կազմում եւ «անհաշտ կոիվ կալվածատիրական և կառավարչական կամայականությունների դեմ»։ Ճիշտ ե, Յափկում ճորտեր չկային, բայց մեծ անբավականություն եր տիրում Պետերբուրգի կառավարության դեմ։ Հետագայում Պուգաչովը յերկրորդ անգամ Յափկ գալով՝ հաշվի առավ այս հանգամանքը։ Բացի սրանից, ամբողջ Յափկի շրջանը շարունակ լիքն եր հալածական ու ճնշված մարդկանցով, վորոնց թիվը XVIII դարում հասավ հսկայական չափերի։ Այս յեկվորների և նին կազակների մեջ շահերի հակամարտություն սկսվեց։

Հետզհետեգերագույն իշխանությունը (կենտրոնական կառավարության ներկայացուցիչը) աննկատելի սահմանափակում եր կազակների աղատ գործողությունները, և նրանց ինքնավարության վերջնական վերացումը ժամանակի խնդիր եր դարձել։ Հանգամանքները նպաստում ելին կառավարությանը։ 1711 թվին լուրջ տարածայնություններ ծագեցին կազակության և գեներալ Տրաունբերգի միջև։ նա ուղարկված եր կենտրոնից քննելու այն դորձը, թե ինչու կազակները հրաժարվել են կալմիկներին հետապնդելուց։ Գործը հասավ զինված դիմադրության։ Հուղած կազակությունն սպանեց գեներալին և նրա հետ գտնված շատ սպաների։ Սպանվեցին նաև կազակության ավագները։ Կոռավարությունն ուղարկեց ուժեղ պատժիչ զորախումբ, անխնա պատժեց նրանց։ Բայց ամենավլխավորն այն եր, վոր նա վերացրեց կազակության արտոնությունները, ինքնուրուխությունը և նշանակեց իր վարչությունը։

Այսպիս ահա ստեղծվեց անհաշտ ու կատաղի վերաբերմունք կազակության մեջ դեպի կենտրոնական կառավարությունը։ Այս բոլորից հետո զժվար չեր Պուգաչովին հանդեռ վորպիս Պետրոս III կայսր և կազակներին իր կողմը գրավել։ Կազակությունը նմանապես իր վրկությունն սպասում եր թագավորից, այն ել Պետրոս III-ից, վոր նրանց կարծիքով լավ եր տրամադրված դեպի ժողովրդական զանգվածները և հրաշքով ազատվել եր իր կնոջ վորոգայթներից։

**Բառեկի բներք** Յափկի կազակության ըմբոստացումը չեր հուզմուներք։ Կարող անհետեանք անգնել։ Ամբողջ շրջանը, Մերձ-Ուրալը, Միջին, Ստորին Վոլգան լցված եր կենտրոնից փախած մարդկանցով, վորոնք պատրաստ եյին ամեն ըռպե զլուխ բարձրացնել այն կառավարության դեմ, վոր նրանց հետեւմ և հալածում եր, Այդ յերկրի բնակիչները, բաշկիրները դարձել եյին կառավարության բռնի գաղութացման առաջնական վերաբերեց, բայց բաշկիրների հուզմունքները մշտական յերեւլիթ եյին Մերձ-Ուրալում։ Թալանված բաշկիրները, ինչ խոսք, ատելությամբ ու թշնամանքով եյին վերաբերվում այս բռնակալներին։

Լավ գրության մեջ չեյին նաև մնացած ազգությունները՝ ղրղզները, թաթարները, չերեմիները, չուվաշները։ Սրանք ևս անբավական ու բացահայտ դժգոհ ելին կառավարական գործելակերպից։ Յեվ ինչպես կարող եյին գոհ մնալ, յերբ կառավարական գործակալներն անգութ կերպով շահագործում եյին նրանց։ Այս ազգությունների բողոքին միանում եյին նաև Ուրալի լեռնա-գործարանային զյուղացիներն ու բանվորները։

Խսկ ճորտ զյուղացիությունը սիրով ու միահամուռ ուժով արձագանքեց Պուգաչովին և նրա ազիտատորներին, վորոնք հորդորում, զրգում եյին՝ «բռնել և թալանել կալվածատերերին»։

Պուգաչովի հրովարտակները ժողովուրդն ընդունում եր մեծ խանդավառությամբ, իբրև վաղուց սպասած շնորհ։ Ժողովրդական հոգեբանությունը հաշվի չեր առնում, թե Պուգաչովի գործողությունները վորքան որինավոր և ուղիղ են։ Այդ ամենը հարկավոր եր նրան, նրա հոգուցն եր բղխում, Յեվ նա ընդառաջ եր գնում։ Պուգաչովը նրա վկայալ առաջնորդն եր, նրա իղձերի հարազատ արտահայտիչը։ Նա խոստանում եր նրանց սպատություն, ազատ կյանք։ Պուգաչովը, հանդես գալով վորպես Պետրոս III, համոզված եր; վոր ժողովուրդը համակրանքով պիտի վերաբերվի այդ անվանը։ Ժողովրդի աշքում Պետրոս III-ը մի բարի թագավոր եր, ուզում եր իշխաններից հողը խել և տալ գյուղացիներին, բայց իշխանները չեն ցանկանում և հալածում են նրան։

Պուգաչովը իր հրովարտակներով ժողովրդին ազատություն եր տալիս, թույլատրում եր թաւանել հողատերերի կալվածները, մահապատիժ եր սպառնում նրան, ով կհամարձակվեր հին պայմաններով աշխատել կալվածատերերի մոտ։ Պուգաչովի գործակալները յերբեմն խոստանում եյին դրամական պարզե ամեն մի սպանված կալվածատերի համար։ Այս գաժան գործողությունները հողատերերի նկատմամբ հրովարտակներն ընդունում եյին իբրև մի որինական, արդար հատուցումն այն վայրագությունների, զրկանքների, վոր կը ել եր գյուղացիությունը տիրող դասակարգերից։

Պուգաչովի այս կոչերը խոր արձագանք եյին գտնում գյուղացիության մեջ։ Վոտքի յելան մերձգոլցիան բոլոր ճարտերը, ապստամբեց ամբողջ կազանի յերկիրը։ Հպատակությունից և զինվորատվությունից ազատվելու և հին հավատաւիքների, հողերի, արոտատեղիների բաշխման խոստումն, — սրանք այնպես գրավիչ և կենսական պահանջներ եյին, վոր գյուղացիությունը չեր կարող անտարբեր մնալ։

Պազաչովյան շարժումը կատաղի և վայրագ բնույթ ուներ։ Կալվածատերերի սպանությունները, ազարտկների հրդեհումները, գյուղատնտեսական գույքի թալանն ու վաշնչացումը —

գաղազած ժողովրդի բուռն զայրույթի սովորական արտահայտություններն եյին։ Ժողովրդական ինքնադատաստանն արտահայտում եր ամենավայրագ ձեերով։ Ապստամբությունն արագորեն ծավալվում եր։ Գյուղացիական շարժումներ սկսվեցին Նիժնի Նովգորոդի, Մյաղանի, Սամարայի, Սիմբիրսկի, Աստրախանի, Վորոնեժի, Տամբովի նահանգներում։ Նրա արձագանքները հասել եյին մինչև Մոսկվա-Պետերբուրգ։ Մուսաստանի կեսը համարյա բռնկվել եր ապստամբությամբ։ Մոսկվան ևս վտանգի տակ եր։ Իշխանությունը զլուխը կորցրել եր շարժման ահռելիության և մեծության դանդեպ։ Սակայն կառավարությունն ինքն իրեն հավաքեց, կազմակերպվեց և հակահարվածի դիմեց։

Շարժումը հսկայական ծավալ ստացավ, Ապստամբության անհաջողությունը կապը թուլացավ։ Բաժան-բազուրութենում ու ժան լինելով՝ խմբերը կորցրին կապը Պուգաչունեավանքերը։ Հովի հետ, իսկ այս հանգամանքը չափազանց թուլացրեց ապստամբությունը։ Յեվ յերբ սկսվեցին Պուգաչովի անհաջողությունները, շփոթությունն ընկավ նրա կողմանկիցերի մեջ։ Իսկ յերբ Պուգաչովը պարտվեց ու գերի ընկավ, դժվար չեր այլևս ջախջախել ու ճնշել անկազմակերպ խմբերը։

Տիրող դասակարգն այս անգամ ել հաղթող գուրս յեկավ։ Հաղթանակող ազնվականությունը հրճվում եր ուրախությունից, վրեժինդիր լինում գյուղացիությունից, սահման չըգնելով իր անզթություններին։ Իր անզթություններով գերազանցեց ապստամբության զլամագոր ճնշողը՝ կոմս Պանինը։ Նա կոտորել տվեց բոլոր նրանց, վորոնք վորուե մասն եյին ունեցել ապստամբության մեջ, իսկ մյուսներին, վորոնք անպետք են են յեղել զինվորական ծառայության համար, ականջներից մեկը կտրել տվեց իբրև հիշատակ նրանց «վոճարագործության» Բացի այդ՝ 300 գյուղացուց մեկին կախել եր տալիս և դիակը թողնում ճանապարհին իբրև խրատ ժողովրդության պատճեն ապահովագործությունից առաջանական մասսաներին։

Պուգաչովյան ապստամբությունից ալլ յելք սպասել չեր կարելի։ Յեթե սկզբում շարժումն այդպիսի հաջողություննեցավ, պատճառն այն եր, վոր նա բռնկվեց տարերայնու-

բեն, ընդգրկեց խոշոր մասսաներ, իսկ կառավարությունը միանգամայն անպատճառ էր: Պուգաչովին նպաստեց նաև այն հանգամանքը, որ նա զրավեց զինագործարանները և զրանով կառավարությանը բավական նեղեց: Սակայն վերջինս ուներ լավ ժարդակած կանոնավոր դրություն, որը և լուծեց ապստամբության վախճանը:

Ազնվականությունն այս ապստամբությունից ևս վոչ մի դաս չառափ: Տիրող դասակարգը, տարված յեսասիրական ձրգատումներով, վրեժ առափ իր ճորտերից այդպիսի դաժան միջոցներով, վորակեսդի նրանց միջից իսպառ վերացնի ապստամբելու արամագրությունը: Հղփացած իր հաջողությամբ՝ նա հանգստացավ: Ըստ յերեսութին հանգստացավ և ժողովուրդը՝ Բայց նա չեր մոռանում Պուգաչովին, նրա շարժումը: Նա չեր կարող հանդիսաւ մնալ, վորովհետեւ ճորտատիրությունը, շահագործությունն անարգել շարունակվում էր: Ու գյուղացիությունը նորից հուզվեց, բռնկվեց Պավել կայսեր թաղավորության առաջին տարիներում:

Ըստ Վ. Պիգեսի

Հ Ա Բ 8 Ե Բ

1. Բարիգործմ էր կառավարությունը գյուղացիների դրությունը:
2. Գյուղացիության սպասելիքները կառավարությունից արդարացան:
3. Վրանիք են ապստամբության պահանջները:
4. Կնտրունական կառավարության և Վոլգայի կազակության տարածայնություններն ինչ վաֆճան ունեցան:
5. Գաղութագման քաղաքականությունը և այլազիների վերաբերմունքը դեպի կառավարությունն ու ապստամբությունը:
6. Ո՞վ էր Պուգաչովը:
7. Ապստամբությունն ինչ ընուլթ և ընթացք ունեցավ:
8. Ի՞նչու անհաջողության մատնվեց ապստամբությունը:
9. Ի՞նչպես պատժեցին գյուղացիներին:
10. Ի՞նչ հաւանիք ունեցավ ապստամբությունը:

Պյուղացիական  
հուզումներն ու  
Կառավարությունները.


Կալվածատիրական ճնշումները, կամայականությունները շարունակվում եյին նույն կարգով, գյուղացիները մշտապես գանգատվում եյին իշխանության, բայց նրանց գանգատները մնում եյին անհետեանք: 1840-50-ական թվականներին ներքին գործոց մինիստրն իր գեկուցման մեջ հայտնում է, թե գյուղացիները շատ են գանգատվում կոռուրեգյառի ծանրությունից, կալվածատերերի դաժան վերաբերմունքից, վատ աննղից, բայց, իհարկե, «ըստ պաշտոնական քննության այդ գանգատները զուրկ են վորեկ հիմքից»:

Կառավարությունն սկսեց ուշադրություն դարձնել կալվածատերերի կամայականություններին այն ժամանակ միայն, չերք ճորտերը համբերությունից յելած սկսեցին անհատական սպանություններ կալվածատերերի, նրանց կառավարիչների: Այս իսկ պատճառով 1842 թվին ներքին գործոց մինիստրը հարկադրված քննություն սկսեց՝ պարզելու, թե այս ամենը չի առաջանում արդյոք կալվածատերերի կամայականությունից և իրենց իրավունքն ի չարը գործադրելուց:

Կալվածատերերի սպանությունները բարեահայտվում վական խոշոր թիվ եյին կազմում: Ըստ ներկայականությանը, քին գործոց մինիստրի տեղեկությունների 1835—54 տ. տ. սպանված ե 144: Ինն տարվա ընթացքում (1835—1843 տ. տ.) ճորտերից Սիբիր են աքսորվում կալվածատերերի սպանության համար 398 տղամարդ և 18 կին, ընդամենը 416 մարդ \*.

Հաճախ ճորտերը կատաղությունից գրդած հարձակվում եյին իրենց տերերի վրա, վերըեր հասցնում, լավ ծեծում և նույնիսկ սպանում: Այսպես, 1840 թ. գյուղացիները Նովգորոդի նահանգում սպանեցին հարուստ հողատեր Գոլովինին, 1843 թվին կապիտան Շլիխտինգի ծառաները գանահարությամբ սպանեցին նրան: 1848 թ. ծառաներն սպանեցին իշխան Յե-

\* Максимов. «Сибирь и каторга».



Նիկեյեին։ 1850 թվին գյուղացիներն սպանեցին իր սենյակի մեջ հարուստ կալվածատեր պալատական խորհրդատու Բազիլիսկուն։ «Հստ մասնավոր հաստատ աხեղեկությունների, գրում և ժամանակակիցներից մեկը, Տուլայի, - Ռյազանի, Տվերի նահանգներում գյուղացիները վերջին տարիներս սկսել են բավական հաճախ գանահարել իրենց կալվածատերերին, մի բան, վոր առաջ տեղի չեր ունենում»։ Վերջապես, սկսում են շատանալ այն անհատական դեպքերը, յերբ գյուղացիները, վրեժխնդրությունից կամ այլ պատճառներից դրդված, հրդեհում են այս կամ այն կալվածատերի տունը, կալվածքը։

Ինչի՞ն բողոքի այս բոլոր ձեերն անհանգստա-  
առաջանում ցնում ենին և՝ կառավարությանը, և կալվածա-  
հուզմունքները։ տերերին, բայց, ինչ խոսք, վոր այս տեսա-  
կետից ավելի մեծ նշանակություն ունելին գյուղացիական հուզմունքները։ Գյուղացիական հուզմունքների զլխավոր պատ-  
ճառը ճորտատիրական կարգերից ազատազրվելու պահանջն եր։ 275 գյուղացիական հուզմունքներից (1836—1849, 1851 և  
1854 թ. թ.) համարյա կեսը (132 դեպք) ծագել եր նրանից,  
վոր գյուղացիներն իրենց արգեն համարել են ազատ։ 73 դեպքը—  
իբրև հետևանք կոոի ծանրության, կալվածատերի կամ կառա-  
վարիչների դաժան վերաբերմունքի և այլն։ 12 դեպքը—անձիշտ  
տեղեկությունների պատճառով, թե իբր ճորտատիրական իրա-  
վունքը վերացվում ե. 10 ը—սպասվելիք կամ կատարվող զաղ-  
թի պատճառով, 5 ը—պարենի պակասության հետևանքով և  
մնացածը—դանազան առիթներով։

Հուզմունքներ  
Զրիմի պատե-  
րազմի ժամա-  
նակ.

Առանձնապես ուժեղ հուզումներ սկսվեցին  
Ղրիմի պատերազմի ժամանակ. Առլթ ծառա-  
լից 1854 և 1855 թ. թ. զինվորացուների  
(օպոլչենի) զրակոչը. Հուզումներ առաջացան

Ռյազանի, Նիժնի Նովգորոդի, Պենզայի նահանգներում, այնու-  
հետև տարածվեցին Կիևի, Սարատովի, Վորոնեժի և այլ նահանգ-  
ներում։ Կառավարությունը զորք ուղարկեց խառնակություննե-  
րը մնշելու և զինվորացուներին վերադարձնելու, Միայն Կիևի  
նահանգն ուղարկեց 16 զումարտակ հեծելազոր, 2 հարյուրակ  
սապյուրներ, 1 դիվլ զիտ հետևակ։

Այսպիսով գյուղացիները շարունակ գլուխ եյին բարձրա-  
ցնում այստեղ-այնտեղ զանազան առիթներով, բայց զլխավոր  
պատճառը — ճորտատիրական լծից ազատվելու բուռն տեն-  
չանքն եր։

Դատ ու դատաս-  
եան։

Չնայած կառավարության ձեռք առած  
իսկստ և դաժան միջոցներին, գյուղացիական  
հուզմունքները չեյին գաղարում։ Նրանք տարեցտարի բունկ-  
վում եյին ավել կամ պակաս ուժգությամբ։ Կառավարությունը  
ամենասոսկալի միջոցների յեր դիմում «խառնակություննե-  
րը» վերացներու։ 261 հուզմունքներից, վորոնց ճնշման յե-  
ղանակները մեզ հայտնի լեն, 132 հուզմունքը խեղդվել են  
զինվորական ուժով, ինարկե եկզեկուցիայի հետ զուգորդված։  
Մնացած դեպքերում խաղաղացնում եյին «խառնակիչներին»  
բռնելով կամ սպանելով։ Սակայն գյուղացիների «համառու-  
թյունը» շարունակվում եր, բռնի միջոցներով չեր կարելի խեղ-  
դվել սոցիալական խոր արմատներ ունեցող շարժումները։ Մինչև  
շարժման դրդիչ պատճ առները չվերանային, գյուղացիությունը  
չեր խաղաղվի։ Վերջիվերջո կառավարության համար ևս հասկա-  
նալի դարձավ, վոր յեթե վերից չվերացվի ճորտատիրական իրա-  
վունքը, ապա գյուղացիությունը ինքն իր սեփական ուժերով  
կիրագործի այդ։ Ու կառավարությունը վերացրեց ճորտատի-  
րական իրավունքը 1861 թ. փետրվարի 19-ի հրովարտակով։  
Ճիշտ ե, ճորտատիրությունը վերացավ, և գյուղացիական հուզ-  
մունքները միասնական դադարեցին, բայց գյուղացիական  
հարցը դրանով չլուծվեց\*։

Հաս Պ. ՄԱՍԼՈՎԻ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ 70 - 90 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո գյուղա-  
ցիության վիճակը շատ քիչ բարվոքվեց։ Հողաբաժնության  
ժամանակ շատ հողեր կտրվեցին գյուղացիներից։ Գաղափար

\* Այս «մեծ սեփորմի» ճիշտ զնահատականը տես լենինի «Բանվոր դասակարգ»  
ու գյուղացիությունը հողվածում. ժավորոնկով և Զյուրինսկի, բաժ. 1, պրակ 28:

տալրւ համար, թե ինչ չափերի հասան այդ կտրտումները, բերում ենք հետեւյալ թվերը:

Մինչ 1861թ. կտրտումների  
քանակը %

Վրչ-սևսհող. շելտ (15 նահանգ) 14.550.000 1.437.000 9.9  
Սևահողային , , (21 , , ) 14.619.000 3.825.000 26.2

Այսպիսով այն վայրերում, ուր գյուղացիության միակ զբաղմունքը յերկրագրծությունն եր, կտրվեց  $\frac{1}{4}$ -ից ավելի այն հողաբաժնից, վոր գյուղացիւթյունն ոգտագործում եր ճորտատիրության ժամանակ: Առանձին ոայսներում ավելի կտրվեց. որինակ՝ Վոլգայի շրջանում — 34,4%, Մալոոռուսիայում — 31,6%, Նովոռուսիայում — 30 տոկոս. իսկ խոշոր կալվածներում աշխատող գյուղացիներից — 75%:

Այսպիսի պայմաններում գյուղացիությունն ստիպված եր վարձագնով հող վերցնել կալվածատերերից կամ ծախել իր բանվորական ուժը: Քանի դեռ վարձագինը չնշին եր, գյուղացիությունը կարողանում եր մի կերպ իր գոյությունը պահպանել. Այդ եր պատճառը, վոր 60—70 թվականներին գյուղացիության և կալվածատերերի միջև ընդհարումներ համարյատեղի չեն ունենում:

Սակայն բնակչությունն աճում է, հողը չեր բավարարում. վարձագինը բարձրանում եր: Գյուղացիների դրությունը ել ավելի վատթարացավ. նա ստիպված եր անասունները ծախել իր ապրուստը հոգալու, վարձագինը և հարկերը վճարելու համար: Այս դրությունը առաջ երերում 70-ական թվականներին տարածայնություններ կալվածատերերին գյուղացիների միջև, վորոնք մասնակի բնույթ են կը ում: Իրեւնմուշ այս շրջանի անկարգությունների բերում ենք հետեւյալ դեպքերի նկարագրությունը:

Նեփեղի գյուղի (Վիլնայի նահանգ, Սվենցիանսկի գավառ) բնակիչներն ոգտվում ելին մի փոքրիկ հողաբաժնից, վորի պատճառով վեճ կար կալվածատիրունի Բուկսենի հետ: Գյուղացիական գործերի ատյանը վճռում եր վեճը հոգուտ կալվածատիրունու. բայց յերբ զավառային հողաչափը և հաշտարար դատավորը փորձ են անում դատարանի վճիռն իրագործել, գյուղացիները մահակներով, բահերով զինված թուլլ չեն տալիս:

և սպառնում են իշխանության ներկայացուցիչներին: Գործը լուրջ կերպարանք երնդունում, իսկույն դեպքի վայրն ե հասնում զորախումբը, կապոտում բոլոր գյուղացիներին և բանտուզարկում:

Այս շրջանի վեճերն ու ընդհարումները պատվում են գլուխավորապես կալվածատերերի, հողերի սահմանագծման և քաղաքացիական որենքների անգիտության շուրջը: Գյուղացիները դառն փորձով ըմբռնում են նոր իրավական հարաբերությունները, «թղթի». ձեւականության նշանակությունը: Որենքը չիմանալով, գյուղացիները կամ ժամանակն են անցկացնում, կամ մոռանում են համախոսականը հաստատել տալ և կամ ուղարկի խաբվում են. սրանց թերին լրացնում են զինվորներն ու ծեծի ճիպոտները, և այսպես հաստատվում ու կիրառվում են տերերին հաճելի որենքները:

80—90 թվականներին գյուղացիների վիճակն ել ավելի վատթարանում ե: Մեր հիշած պատճառներին ավելանում ենան կապիտալիստական տնտեսության մըցումը գյուղում: Այս իսկ պատճառով վարձագինն ավելի բարձրանում է, քայլայվում են վարձակալ գյուղացիները, վատթարանում ե վլածակը նաև այն հողագործների, վորոնք առանց վարձագնով հող վերցնելու կարողանում եյին իրենց գոյությունը պահպանել: Անասունների կրծատումը հսկայական չափերի յե համենում համարյա ամբողջ Ռուսաստանում: Սակավահողությունը մեծ ծավալ ե ընդունում, գյուղացիության համար անելանելի վիճակ ե ստեղծվում:

Ընդհարումները գյուղացիների և կալվածատերերի միջև ավելի սուր բնույթ են ստանում և ընդգրածակվում, տարածվում շատ գավառակներում, գլխավորապես Ռուսաստանի հարավում: Ալդ շարժումներն արտահայտվում են հետեւյալ ձևով. գյուղացիներն ինքնակամ վարում են, արածացնում կալվածատերերի հողերը, արտատեղիները, կարտում անտառները, հրդեհում կալվածները, սպանություններ կատարում, իշխանությանը դիմադրում, ջրաղացների ամբարտակները քանդում և այլն: Իսկ կառավարությունն ել իր սովորական միջոցներով՝ եկղեկուցիայով, բանտով, տաժանակիր աշխատանքով, ծեծով, սպանություններով գերականգնում ե «լսաղաղությունը»:

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՐԴՈՒՄ Խ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Գյուղացու անել դրությունը շարունակվում է ավելի ուժով՝ գնությամբ։ Գյուղացու մանր տնտեսության ճգնաժամն սկըսվում է միաժամանակ զանազան վայրերում, և շարժումներն ելքոնկում են հենց այն ռայոններում, զորտեղ գյուղացու վիճակն ավելի հուսահատական եր՝ Շարժումները համարյանույն ձեւրով, միայն ավելի ուժգին թափով սկսվում են Պալտավայի, Խարկովի նահանգներում և առասարակ ամբողջ սեահողալին շրջանում։ Նման շարժումներ տեղի յեն ունենում նաև վոչսեահողային շրջանի վորոշ կետերում, Անդրկովկասում, գլխավորապես Գուրիայում։ այստեղ շարժումն սկսվում է անբերիության հետեւ վանքով 1901 թվին և շարունակվում մինչև 1903 թիվը, ստանալով վորոշ քաղաքական հեղափոխական բնույթ։ Լսդիանը այս շարժումները կրում ելին զուտ տնտեսական բնույթ, արդյունք նույն պատճառների և ունենում ելին համարյանույն ձևերն ու հետևանքները։ Առանձնապես մեծ նշանակություն ունեցան Պալտավայի և Խարկովի շարժումները, զորոնք որինակ հանդիսացան մյուս շրջանների համար։

### 1902 թվին գյուղացիական հուզումները

շարժման 6 որ չարաչար ճշշվեցին և 1903—04 թ. թ. մասաւայական շարժումներ համարյա թե տեղի չունեցան։ Սակայն լարված, զսպված դրությունը

շարունակվեց։ Գյուղացիները, դառն փորձից խրատված, շարունակում են պայրերը նոր ձեւրով։ բոյկոտ են հայտարարում, հրաժարվում են վարձագնով հող վերցնել կալվածատերերից և աշխատել։ Գործադուլի միջոցով բարձրացնում են աշխատավարձը և իջեցնում հաղի վարձագինը և այն։ Այս ամենի հետ շարունակում են հացի, բերքի հրդեհումները, փչացումը, անհատական սպանությունները և այլն։ 1903—04 թ. թ. շարժումները թեև չունեն 1902 թ. ծավալը, բայց ավելի համառ բնույթ են կրում։ Բոյկոտը, գործադուլը պահանջում են ավելի կազմակերպություն ու տոկունություն, ինչպես մենք այդ տեսնում ենք Պալտավայի և Խարկովի շարժումներին։ Կիսի նահանգի չորս գյուղում (Սելեղնովկա, Շչապուլկա, կրիվոշելի-

ցա և Վերխովնա) գյուղական բանվորները գործադուլ են հայտարարում, պահանջելով աշխատավարձի հավելում։ Իշխանությունը նախ ձերբակալում է ամբողջ գյուղը, բայց հետո արձակում է, միայն 2-ին պահելով։ Գործադուլը շարունակվեց յերկու շաբաթ, և նրանց պահանջները բավարարվեցին։ Գործադուլի ժամանակ գյուղացիները փոխադարձաբար ոգնում եյին իրար։ Գործադուլի հաջողությունը մեծ վոգերություն եր առաջացրել։

Այսպիս, 1903—04 թ. թ. մենք հանդիպում ենք շարժման այն բոլոր ձևերին, ինչ զոր ավելի մեծ չափերով կրկնվեցին 1905—06 թվերին։ Այնից շատ դարձյալ կրկնվում ելին հըպետները բազմաթիվ վայրերում։ Դրությունը շատ լարված եր։ «Մեր գյուղերն ապրում են հուզումներից զրություն», գրում եյին մեր թղթակիցները։ Գյուղացիների կատաղությունն արգեն պարզորեն նկատվում եր։ շատ կալվածատերերը զգում եյին արգեն և գուշակում «հեղափոխության մոտալուտ գալուստը»։ Գյուղացիությունն արտաքուստ հանգիստ եր, լուս եր, բայց հարկադիր եր մի առիթ, մի կայծ, զոր նոր, չտեսնված թափով բռնկվեր նա։ Այդ առիթը տվեց 1905 թվի հեղափոխությունը։

Հայ Պ. Մասլովի

### Հ Ա. Բ Յ Ե Բ

1. Ի՞նչ բնույթ եյին կրում գյուղացիական հուզումները ԽIX դարի սկզբներին։
2. Ի՞նչից եյին սառաջանում այդ հուզումները։
3. Ի՞նչպես եր վերաբերվում կառավարությունն այդ հուզումներին։
4. Բանի միջոցներով կարողանում եյին խեղզել գյուղացիական շարժումները։
5. Ի՞նչը հարկադրեց կառավարությանը վերացնելու ձորատիրական իրավունքը։
6. Ճարտարիական իրավունքի վերացումը բարվորեց գյուղացիների վիճակը։
7. Ի՞նչու թուլացան զյուղացիների հուզումները 60—70 թվերին։
8. Ի՞նչ պատճառով քամթարացավ զյուղացիության վիճակը 80—90 թ. թ.։
9. Ի՞նչ բնույթ ունեյին այդ շրջանի զյուղացիական շարժումները։
10. Ի՞նպիսի միջոցներով եր կառավարությունն ճնշում այդ շարժումները։
11. Ի՞նչ վիճակի մեջ եր զյուղացիությունը ԽX դարի սկզբներին։
12. Վոր շրջանում, նահանգներում ուրեմնույթ են ստանում զյուղացիական շարժումները։
13. Տնտեսական թե քաղաքական բնույթ ելին կրում այդ շարժումները։
14. Անդրկովկասի ֆոր վայրերում տեղի ունեցան զյուղացիական շարժումներ և ինչ բնույթ ելին կրում նրանք։
15. Պարնք են զյուղացիական շարժման նոր ձևերը։
16. Ի՞նչով ելին այդ նոր ձևերը տարրերում հին ձևերից։
17. Ի՞նչ զրություն եր ապրում էր գյուղացիական նախորյակին։



## ՑԱՆԿ ՆՅՈՒԹԵՐԻ

ա. ԱՏԵՆԱԿԱ. ՌԱԶԻՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Դոնի բնակիչները. 2. Ընչաղուրկների գոռոթյունը. 3. Ռազինը ընչաղուրկների առաջնորդ. 4. Ռազինը Դոնի գիկտասոր՝ 5. Ռազինի կոփման իշխանների գեմ. 6. Ապստամբության ընթացքը. 7. Ապստամբության բնույթն ու անհաջողությունը:

3

բ. ԳՈՒԺԱՉՈՎՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Գյուղ սցիսկան հուզմունքները XVIII դ. 2. Ապստամբության պատճառները. 3. Ո՞վ եր Պուգաչովը. 4. Ըստհարում ցարական գեներալի և Յափկի կազակների միջև. 5. Բաշկիրների հուզմունքը. 6. Պուգաչովի գործունեյությունը. 7. Ապստամբության անհաջողությունն ու հետեանքները:

15

գ. ԳՅՈՒԺԱՅԻԱԿԱՆ ՀՅՈՒԶՈՒՄՆԵՐԸ XIX դ. ՍԿՂԲՆԵՐԻՆ.

17

դ. » » 70—90. թ. թ.

19

ե. » ՇԱՐԺՈՒՄԸ XX դ. ՍԿՂԲՆԵՐԻՆ.

22



